



ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ԵՕԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ Տ. ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՇՆՈՐՀԻԻ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ՍՈՒՐԲ ԵՒ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ՅՈՐՄԷ ՀԱՍՅԷ ՇՆՈՐՀՔ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱԶԳԱՊԱՐԾԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ:

Մըժի անհուն զոհունակութեամբ է որ կ'ողջունենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եօթանասունհինգամեակը: Նրուսաղէմի Պատրիարքութիւնը, Սբոց Յակոբեանց զինուորեալ Միաբանութիւնը եւ մեր հայ համայնքը ուրախ եւ երախտալարս սրտով կը յայտնեն, մեզի հետ, իրենց սէրն ու հիացումը Միութեանը: Բարեգործականը Հայ ժողովուրդին համար իրական նախախնամութիւն մը եղած է, աստուածային զթութեան եւ ողորմութեան կենդանի պատկերը, մեր կարիքներուն եւ ցաւերուն իբրեւ սփոփանք:

Ազգապարծան այս Միութեան ծնունդը մեր պատմութեան հոյակապ էջերէն մին կը կազմէ եւ իր եօթանասունհինգ տարիներու բազմաբարձի իրագործումները կը լեցնեն հայ կեանքը, մանաւանդ արտասահմանի տարածքին: Նմանօրինակ ուրիշ ոչ մէկ ազգային հիմնադրութիւն, թէ՛ իր գոյութեամբ եւ թէ իր արգասիքներով, չէ կրցած հաւասարիլ առողջ եւ կենսունակ այս «փոքրիկ հանրապետութեան», ինչպէս կը սիրէր ըսել անոր երանեալ հիմնադիրը:

Հ. Բ. Ը. Միութեան եօթանասունհինգամեայ յղացքը յսակօրէն տեսնել կարեւորաւ համար, անհրաժեշտ է դար մը ետ երթալ մեր օրերէն, կրօնելու այն մեծ նիզը՝ զոր մեր ժողովուրդը փորձեց ժԹ. Դարու կէսերէն իսկ, ժամանակին յարմարելու, ինքզինքնը նորոգելու եւ իր գործունէութիւնները բերելու ազգային գիտակցութեան սեղանին:

Այդ նիզը կը տարածուէր մեր կեանքի բոլոր երեսներուն վրայ: Բարձրագոյն կրթութեան դպրոցներու ցանցը, ընկերային գեների վրայ մեր ստեղծած օրէնսդրական կազմակերպութիւնները, մամուլի եւ գրականութեան

ճնորհիւ մեր արուեստի զգայարանին կազմաւորումը, արդիւնքներն էին մտքի այդ սլացքին: Հակառակ այս իրողութիւններուն, 1900ին մեր ժողովուրդի հոգիին մէջ ամենէն խոր յուսահատութիւնը կը տիրէր եւ մեր ժողովուրդի վերին խաւը կը մտածէր նոր իրագործումներու, մեր ցաւերուն եւ կարիքներուն իբրեւ սպեղանի:

1906ին, եգիպտոսի մէջ սպայակոյտ մը հարուստ եւ ակամաւոր հայերու, գլխաւորութեամբ յաւէտ անմոռաց Պօղոս Նուպար Փաւայի, հիմը կը դնէին նոր կազմակերպութեան մը, նոր գաղափարաբանութեան մը, Ն. Բ. Ը. Միութեան ծրագիր ձեռնարկին: Առաջին անգամն էր, որ ունեւոր մարդիկ դուրս կու գային իրենց հեռախոր եւ երջանիկ կողիացումէն, հեռապնդելու ազգային մեծ իսէալ մը:

Կրկին էր արժէքը այս հաւաքական ձեռնարկին՝ մեր ազգային իրականութեան մէջ, բարոյական եւ նիւթական: Բարոյական՝ վստմի առաջնութեան հանդէպ, դասակարգը ոչ թէ ամահանգով, այլ ի պարտաւորութենէ կը մօտենար ազգին վերհերուն եւ կարիքներուն, իսկ իբրեւ նիւթական ձեռնարկ, օգնութեան եւ նպաստի աննախընթաց կազմակերպութիւն մը կը հիմնէր: Անոր նախախնամական դերի մասին որեւէ վարամի մերեկի պիտի չըլլար ոեւէ հայու, որ ունի իր ազգին հպարտութեան զգացումը:

Անոր խնամաստարական դերը մանաւանդ՝ արկածահարութեան ենթարկուած մեր ժողովուրդի բեկորներուն հանդէպ, վերածննդ Միութիւնը բուծիչ ձեռքի մը, երկարած մեր վերհերուն, Աւետարանի Բարի Սամարացիին չափ արտառույց:

Յօրանասունհինգ տարիներ վերջ, երբ կը նայինք իր շեղ արդիւնքներուն եւ մասուցած բարիքներուն, կ'ըսենք իւրովի. Թող օրհնուի յիշատակը բոլոր անոնց, որոնք ջանացին որ գոյութեան գայ բազմաբարիք այս հաստատութիւնը: Չեղաւ աղէտ մը, որուն չհասաւ ան, կարիք մը՝ անհետական եւ կրթական, որուն իր իշխանական բաժինը չբերէր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

Բարեգործականը միայն չգանձեց, այլ իր գանձումները կազմակերպեց նորագոյն թէքնիքով, բազմապատկելով զանոնք շահագործման նոր միջոցներու համաձայն: Այս կերպով իր գործունէութեան մէջ կը համագործակցէին հին եւ նոր ձեւերը, այսինքն Բարեգործականը կը կատարէր աղօթատախտակ, կատարարի եւ դրամասան դերերը միանգամայն:

Միութիւնը նպաստած է եւ կը նպաստէ հայ ժողովուրդի շինարարական ձեռնարկներուն: Կրթական ցանցեր տարածած է մեր բոլոր գաղութներէն մերս: Անելծած է երիտասարդական կազմակերպութիւններ, ստատոս հանդիսանալով անոնց մատուր եւ բարոյական կրթութեան: Ռովինեսէ Ն. Բ. Ը. Միութ-

թեան իմաստուն վարիչները կը հաւատան թէ լաւ պատրաստուած անհաս մը խմորն է իր ժողովուրդի ապագային:

Միութիւնը այսօր իր գործունէութեան ամենէն ճախ եւ բախտորոշ օրերն է որ կ'ապրի: Արտասահմանի բոլոր կեդրոններու մէջ իր ստեղծած նիւթական, բարոյական եւ կրթական բիւջաները եւ անոնց յառաջանայեաց նպասակները պատիւ կը բերեն ազգապարծան այս կազմակերպութեան:

Մեծ է թիւը անոնց, որոնք ոսկի եղթան կը կազմեն այս Միութեան: Հոս, խոր երախտագիտութեամբ եւ հիացումով սրտի, պարտք կը նկատենք մեր յարգանքն ու սէրը բերելու այս ոսկի եղթայի երկու աղամանդ օղակներուն, մէկուն՝ իբրեւ հիմնադիրը Միութեան եւ միւսին՝ Վսեմաւար Տիար Ալէքս Մանուկեանին, Միութեան ցկեանս Նախագահին, որ մեր օրերու ամենէն պատկառելի եւ բացառիկ արժէք ներկայացնող դէմքն է: Ամէն համայնք հայ գաղթաւարի կը նայի անոր իբրեւ ազգային մեծ բարեւար եւ պարծանքը իր ժողովուրդին, որ գիտէ միշտ գիմաւորել ամէն կարիք իրեն յատուկ իմաստութեամբ եւ իշխանաւլայել զգացումներով:

Թող հազար ապրի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որպէսզի որքան ասեմ որ կարիք ունեցողներ գտնուին, վայելեն իր սէրն ու խնամքը, ըլլան յստիքեական օրհներգու իր անունին եւ Միութիւնը միշտ կանգուն պահողներու կեանքին:

Սիրով եւ օրհնութեամբ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

